



Հ. Օ. Կ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷ

---

ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆ

---

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

~~1936~~

ՏՊ. ՄԱՍԻՍ

ԳԷՂՐՈՒԹ

1936

A. D. S.

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS DEPARTMENT


Հ. Օ. Կ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷ

ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆ

ԹՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

Կ/Կ  
7/16





# Հ. Օ. Կ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷ

ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆ

ՆՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆՍԱԳԻՐ

## I Ն Պ Ա Տ Ա Կ

Յօդ. 1. — ՀՕԿ-ի ն պ ա ա ա կ ն է՝

Ա. Օժանդակել Խորհրդային Հայաստանի շինարարական աշխատանքին :

Բ. Փոխադարձ բարոյական կապ հաստատել երկրի և գաղութահայութեան միջև :

Գ. Նպաստել Խորհ. Հայաստանի անասա-մշակութային զարգացման, քաջալերել արդիւնաբերական և մշակութային ձեռնարկները և այս նպատակաւ արատասահմանի մէջ հիմնել ընկերութիւններ :

Դ. Աջակցիլ ներգաղթի գործին :

Ե. Բացառիկ գէղ. քերութիւններու պարագա-

Յօդ. 6.— Իւրաքանչիւր անգամ պարտաւոր է ունենալ ՀՕԿ-ի անգամակցութեան տեսրը և ամսավճար մը վճարել, փոխարէն ստանալով համարժէք գրոշմաթուղթ :

Ամէն տարի անգամատեսրերը կը փոխուին :

Յօդ. 7.— Անգամավճարի նուազագոյն սակը մէկ ֆրանք է :

Մուտքի նուէրը պարտաւորիչ է նըւազագոյն սակ ընդունելով երկու ֆրանք՝ բոլոր նոր անգամագրուողներուն համար :

Յօդ. 8.— Այն անգամը, որ վեց ամիս չարտնակարար իր ամսավճարը չի վճարել, կը դադրի ՀՕԿ-ի անգամ ըլլալէ :

Յօդ. 9.— Իւրաքանչիւր անգամ պարտաւոր է ժողովրդականացնել ՀՕԿ-ի նպասակները և նոր անգամներ գտնել :

Յօդ. 10.— Քուէարկութեան իրաւունք ունին այն անգամները, որոնք կանոնադրարար վճարած են իրենց ամսա-



վճարեները և ասնուազն ամիս մը առաջ  
անդամադրուած :

V. ԵՆԹԿՄՍՄՆՍՈՃԻԻՂ, ԵՒ ՄՍՄՆՍՈՃԻԻՂ

Յօդ. 11. — Միևնոյն քաղաքի մէջ  
լնակող ՀՕԿ-ի անդամները կը կազմեն  
տեղական եկրամասնակիւղ եթէ իրենց  
թիւը քսանէն վար է, մասնակիւղ՝ եթէ  
քսանէն աւելի է :

Պէյրութ, Գամասկոս և Հալէպ քա-  
ղաքները, Կեղրոնի հաւանութեամբ, կըր-  
նան մէկէ աւելի մասնաճիւղեր ունե-  
նալ :

Յօդ. 12. — Կիներու ուրոյն մաս-  
նաճիւղերու կազմութիւնը հակառակ է կա-  
նանադրութեան արամադրութիւններուն :  
Մասնաճիւղերու կիւն անդամները կարող են  
կազմել կիւն բաժին և ունենալ իրենց  
ստանձին հաւաքոյթները, լաւապոյն կեր-  
պով առաջ տանելու համար կանանց մէջ  
պրոպագանդի աշխատանքները : Այս աշ-  
խատանքները կը տարուին մասնաճիւղի  
վարչութեան ղեկավարութեան տակ :

Կիւն անդամները մասնաճիւղերու մէջ

ունին այրերուն հաւատար բոլոր իրաւունքներն ու պարտականութիւնները :

Յօդ. 13. — Ենթամասնաճիւղը կ'ուսնեայ իր քարտուղարն ու գանձապահը և կը կապուի մերձաւոր մասնաճիւղի մը հետ :

Ենթամասնաճիւղը կնիք գործածելու իրաւունք չունի :

Յօդ. 14. — Մասնաճիւղի վարչութիւնը կ'ընտրուի ընդհ. անգամական ժողովէն և կը վաւերացուի կեդրոնական վարչութեան կողմէ : Վարչութեան անգամներուն թիւը 5-էն մինչև 9 կրնայ ըլլալ :

Վարչութիւնը ինքն իր մէջէն կ'ընտրէ ատենապետ, ատենադպիր և գանձապահ : Վարչութիւնը ամէն շաբաթ ժողով կը գումարէ : Երեք անգամ շորդաբար և առանց բանաւոր պատճառի բացակայող անգամը հրաժարած կը նրկատուի :

Վարչութեան պաշտօնավարութեան աւստրութիւնը մէկ տարի է : Անգամները



վերընարելի են : Վարչութեան կազմի ամէն փոփոխութիւն պէտք է ենթարկուի կեդրոնական վարչութեան վաւերացումին :

Յօդ. 15. — Մ. ճիւղի վարչութեան պարտականութիւնն է վերին մարմիններու որոշումները գործադրել, հաւաքոյթներ և բանախօսութիւններ սարքել, հասոյթի նոր աղբիւրներ ստեղծել, կանոնաւոր հաշիւ պահել և ամէն ևրեք ամիսը անդամ մը տեղեկագրել կեդրոնի բարոյական և նիւթական գործունէութեան մասին :

Իւրաքանչիւր Մ. ճիւղի վարչութեան պարտականութիւնն է ուժ սալ 20-ի պրոպագանդի գործին, Մ. ճիւղին հովանաւորութեան տակ ստեղծելով մշակութային, մարզական և լսարան-ընթերցարանական միութիւններ :

Յօդ. 16. — Վարչութեան հրաւերով առնուազն ամիսը անդամ մը ընդհանուր անդամական ժողով կը գումարուի : Իւրաքանչիւր անդամական ժողով կ'ունենայ իր առանձին ղիւանք և կը զրադի



վարչութեան կողմէ՛ զրուած օրակարգը-  
րով :

Բացառիկ ընդհանուր անդամական  
ժողով կը դաժարուի եթէ՛ անդամներու  
մէկ երրորդը գրաւոր փափաք յայտնէ :

Յօդ. 17. — Ընդհ. անդամական ժո-  
ղովը օրինաւոր կը համարուի եթէ՛ ան-  
դամներու կէսէն՝ աւելին անձամբ ներ-  
կայ է : Եթէ՛ առաջին ընդհ. անդամա-  
կան ժողովը մեծամասնութիւն չգոյացնէ,  
7—15 օրուայ մէջ հրաւիրուած երկրորդ  
ընդհ. անդամական ժողովը օրինաւոր կը  
նկատուի, ինչ որ այ ըլլայ ներկաներու  
թիւը, պայմանաւ որ նոյն օրակարգը  
ունենայ :

Բոյսր սրոյումները կը արուին ձայ-  
ներու պարզ մեծամասնութեամբ :

Յօդ. 18. — Սուրիոյ և Լիրանանի  
մասնաճիւղերը կը բաժնուին հինգ շրջ-  
ջանի. ա) Դամասկոսի շրջան, որուն  
կ'ենթարկուին Ճէպէյ-Տրիւզ և Հալբան.  
բ) Հալէպի շրջան, որուն կ'ենթարկուին  
Համա և Հոմս դ) Ալէքսանտրէթի սան-  
ձաղի շրջան, որուն կ'ենթարկուի Լա-

թաքիա, և) Պէջրութ-Լիբանանի շրջանի  
Բարաքանչիւր շրջանի պատկանող Մ.ճիւ-  
ղերու վարչութիւններու ներկայա-  
ցուցիչները կրնան այդ կեդրոններուն  
մէջ, միջմասնաճիւղային խորհրդակցա-  
կան ժողովներ գումարել, կեդրոնական  
վարչութեան անդամի մը նախագահու-  
թեան տակ :

Յօդ. 19. — Միջմասնաճիւղերու ներ-  
կայացուցչական ժողովներու դերն է  
Մ.ճիւղերու աշխատանքը ներդաշնակել,  
Բարաքական ժողովներ սարքել, շրջանի  
պրոպագանդը գորայնել և նոր մասնա-  
ճիւղեր հիմնել հասարակաց ճիւղերով :

Յօդ. 20. — Միջմասնաճիւղային այս  
խորհրդակցական ժողովներու որոշում-  
ները կը կործաղրուին կեդրոնական վար-  
չութեան վաւերացումէն յետոյ :

## VI ՊԱՏԳԱՄԱՍՐԱԿԱՆ ԺՈՂՈՒ

Յօդ. 21. — Պատգամասրական ժո-  
ղովը կը կուսարուի տարին անգամ մը  
կեդրոնական վարչութեան հրահրով :  
Արտակարգ Պատգ. ժողով կը գումարուի



Վարչութիւնն է, որուն կեդրնը Պէյրուսի կը գտնուի :

Յօդ. 27. — ՀՕԿ-ի Սուրիոյ և Լիբանանի բոլոր Մ. ճիւղերը ուղղակիօրէն կապուած են կեդր. Վարչութեան և անոր ենթակայ :

Յօդ. 28 — կեդր. Վարչութիւնը կը բաղկանայ 9 անդամներէ :

Յօդ. 29. — կեդր. Վարչութիւնը իր մէջէն կ'ընտրէ իր գլխանը՝ Ա. և Բ. Ա. և նապեա, Ա. և Բ. Քարաուզար և Փանձապահ :

Յօդ. 30 — կեդր. Վարչութեան անդամներուն շորսը կրնայ գաւառ բնակիչ և չրջաններու մէջ գործել իրբև. կեդրոնի անդամ : Անոնց համար պարտաւորիչ չէ կեդր. Վարչութեան նիստերուն ներկայ գտնուիլ, այլ մշտական յարարերու թեան մէջ կ'ըլլան գլխանին հետ :

կեդր. Վարչութեան նիստը օրինաւոր կը համարուի երբ Պէյրուսի գտնուող անդամներու մեծամասնութիւնը ներկայ է : Երեք ամիսը անդամ մը գաւառ բնակող անդամներու հետ կեդր. Վարչութիւնը լիակատար նիստ կը գումարէ :

Յօդ. 31. — Կեդր. Վարչութեան պարտականութիւնն է ղեկավարել Հօկ-ի ընդհանուր գործը, անոր նպատակը իրականացնելու համար հարկ եզած աշխատանքը ի գործ դնել, հակել Մ-ճիւղերու գործունէութեան վրայ, հրահանդներու ցուցմունքներ ստլ, վաւերացնել Մ-ճիւղերու վարչութիւններու ընտրութիւններն ու որոշումները, մասնաճիւղերը եւ հասարակութիւնը անդիտակ պահել Խորհ. Հայասանի մէջ կատարուած շինարարական աշխատանքներէն եւ Հօկ-ի գործունէութենէն :

Յօդ. 32. — Կեդր. Վարչութիւնը կ'ընտարէ սխառագամաւոր մասնակցելու համար Հօկերու համադումարին :

Յօդ. 33 — Կեդր. Վարչութիւնը իրաւասու է, անհրաժեշտ դասած ատենը, հաշուետութիւն պահանջելու մասնաճիւղերէն :

Յօդ. 34 — Կեդր. Վարչութիւնը Հօկ-ի մասնաճիւղերու ըտրը հասոյթները կը կեդրոնացնէ իր գանձին մէջ : Երկրի մէջ գործադրելի գումարները կը գործադրէ Երեւանի Հօկ-ի Գլխաւոր Վարչութեան միջոցաւ :



Որևէ մասնաճիւղ իր հասոյթներուն  
ստ առաւելն 20 առ 100ը միայն կրնայ ակ-  
ղական ծախքերու յատկացնել :

20 առ 100է աւելի եղող բոլոր ծախսերը  
պէտք է որոշուին վարչութեանց կողմէ և  
կիրարկուին միմիայն կեդր. վարչութեան  
վաւերացումէն յետոյ :

Որևէ մասնաճիւղ իր դանձին մէջ կը-  
կու ամսուան հասոյթէն աւելին չի կրնար  
պահել :

Յօդ. 35. — Կեդր. վարչութիւնը կրնայ  
կախակայել և հրաժարեցնել այն անդամ-  
ները և լուծել այն վարչութիւնները, որոնք  
դէմ կ'երթան ներկայ կանոնագրի արա-  
մադրութիւններուն : Երբ հարկ տեսնէ  
միջոցներ ձեռք կ'առնէ և առժամակ  
կարգադրութիւններ կ'ընէ Հօկ-ի ներ-  
դաշնակ ու կանոնաւոր դործունէութիւնը  
ապահովելու համար :

Մայրայեղ պարագային կեդր. վար-  
չութիւնը իրաւասու է նոյնիսկ անկար-  
գապահ Ա.ճիւղ մը լուծելու :

Մոռ

917

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0321315